Գործ թիվ ԵԴ/43516/02/22

ՎՃԻՌ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը *(այսուհետ՝ դատարան)*, նախագահությամբ

ԴԱՏԱՎՈՐ՝	ԱԼՖՐԵԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Քարտուղարությամբ՝	Մանե Մեսրոպյանի
Դատավարության մասնակիցներ՝	
Հայցվոր՝	<<Հիդրովերանորոգում>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն /ՀՎՀՀ՝ 03801977, գրանցման համար՝ 77.110.781918, հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովայի փողոց, 32 շենք/
Հայցվորի ներկայացուցիչ՝	Արմեն Օհանյան /փաստաբանական գործունեության թիվ 947 արտոնագիր, լիազորագիր՝ տրված 08.07.2022թ. հայցվոր <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ի տնօրեն Գևորգ Վարդանյանի կողմից/
Պատասխանող՝	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե /հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Վարդանանց 13ա/
Պատասխանողի ներկայացուցիչ՝	Սուրեն Ալեքսանյան /լիազորագիր՝ տրված 17.02.2023թ. պատասխանող ՏԿԵՆ ջրային կոմիտեի նախագահ Վահագն Գևորգյանի կողմից/

ք.Երևան
2023թ. մարտի 20

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի <<Հիդրովերանորոգում>> ՍՊ ընկերության *(այսուհետ՝ հայցվոր)* ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի *(այսուհետ՝ պատասխանող)*՝ ՋԿ-ԲՆԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2022թ. թիվ 5 և 28.06.2022թ. թիվ 6 արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու, և 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների մասին.

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 101, 105, 109, 168, 189, 191, 192, 198 և 362 հոդվածներով՝ դատարանը.

ՎՃՌԵՑ

1. <<Հիդրովերանորոգում>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի՝ ՋԿ-ԲՆԱՇՁԲ-22/6-Ա ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.06.2022թ. թիվ 5 և 28.06.2022թ. թիվ 6 արձանագրային որոշումներն անվավեր ճանաչելու, և 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր կնքել պարտավորեցնելու պահանջների մասին հայցը մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱԼՖՐԵԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ